## ՖԱՐՂԱՆԻ (Թ դար)

Նրա լրիվ անունն է Աբու-լ-Աբբաս Ահմադ իբն Մուհամմադ իբն Քասիր ալ-Ֆարղանի: Դատելով անունից ծնվել է Ֆարղանայում՝ Միջին Ասիայի Սողդ երկրում, որն իրանական բնակչություն ուներ:

Մանոթ է իբբև ասաղարաշխ և աշխարհագրագետ: Ըստ մատենագրական տվյալների ապրել է Մամունի (813-833) օրոք և դեռ կենդանի է եղել Մուտավաքքիլ խալիֆայի մահվան (861) տարում, քանզի Աբու-լ-Մահասին իբն Տաղրիբիրդին (ԺԵ դ.) վկայում է, որ այդ տարում Մուտավաքքիլը Ահմադ իբն Քասիր ալ-Ֆարղանիին ուղարկեց Ֆուսթաթ (Եգիպտոս)՝ հսկելու Նեղոսաչափի (Նիլոմետր) կառուցման աշխատանքներին:

Նրա մեծ աշխատությունը, որի ձեռագրի օրինակները գտնվում են Օքսֆորդում, Փարիզում, Կահիրեում, ինչպես նաև Պրինստոնի (ԱՄՆ) համալսարանի գրադարանում, տարբեր վերնագրեր ունեն՝ «Ջավամի Իլմ ալ-Նուջում ու ալ-Հարաքատ ալ-Սամավիյա» (Ժողովածու աստղաբաշխության և երկնային շարժումների), «Ուսուլ Իլմ ալ-Նուջում» (Աստղաբաշխության օրենքներ), «ալ-Մուգխալ Իլա Իլմ Հայատ ալ-Աֆլաք» (Ներածություն մոլորակների կառուցվածքի գիտության) և «Քիտաբ ալ-Ֆուսուլ ալ-Սալասին» (Երեսուն գլուխների գիրք):

Այս աստղագիտական երկը միջնադարում (ԺԲ դ.) թարգմանվել է լատիներեն Հովհան Իսպալենսիսի և Ժերար Կրեմոնացու կողմից: Թարգմանվել է նաև եբրայերենի: Լատիներեն թարգմանությունը հրատարակվել է Ֆերրարայում՝ 1493-ին, Նյուրենբերգում՝ 1537-ին և Փարիզում՝ 1546-ին: Յակոբ Քրիսմանը այն եբրայերենից թարգմանել է լատիներենի, որը տպագրվել է Ֆրանկֆուրտում՝ 1590-ին: Յակոբոս Գոլիուսը հրատարակել է արաբերեն բնագիրը, լատիներեն թարգմանությամբ և ծանոթագրություններով 1669-ին Ամստերդամում:

Բացի այս գլխավոր երկից, որը Եվրոպացի աստղաբաշխ Ռեգիոմոնտանոսից առաջ, բոլոր արաբ աստղաբաշխների գործերից ամենահայտնին էր Եվրոպայում, Ֆարղանին գրել է նաև երկու գիրք աստրոլաբների (աստղաբաշխական գործիք) մասին, գրել է նաև երկու գիրք՝ «ալ-Քամիլ ֆի-լ-Ասթուրլաբ» (Լիակատար տեղեկություններ աստրոլաբի մասին) և «Ֆի Սանաատ ալ-Ասթուրլար» (Աստրոլաբների պատրաստման արվեստը), որոնցից ձեռագրեր կան Բեռլինում և Փարիզում:

Ֆարղանիի աստղաբաշխական երկը բաղկացած է երեսուն գլուխ-

*ներից (ֆասլ)։ Թարգմանել ենք առաջին և իններորդ գլուխները. իսկ մնացած գլուխները աստղաբաշխության են վերաբերում՝ մոլորակների, աստղերի, լուսնի և արևի խավարման, մոլորակների երկրից ունեցած հեռավորության և այլ հարցերի մասին։*

*Արամ Տեր-Ղևոնդյան*

*(al-Farghani, H. Suter [J. Vernet], EOI, CD-ROM, (II: 793a))*

*Տե՛ս.*

**Muhammedis fil. Ketiri Ferganensis, qui vulgo Alfraganus dicitur, Elementa astronomica, Arabice et Latine. Ed. Jacob Golius, Amsterdam, 1669.**